

Արեւելեան լեզուաց մեծանուն Տօքտէօն և Բերլինի Համալսարանի ուսուցչապետ Մեծ . Հ. Պետերման բարեհաճած է աշխարհագրական հինգ ընտիր քարտեզներ նուէր ղրկել Սրբոյ Աթոռոյս յառանգաւորաց Վարժարանին, խոստանալով, յետ աւարտման, Կիպերոսի նորատիպ աշխարհացոյցներն եւս ղրկել :

Առ այս հրապարտեալ մատուցանելով մեր խորին շնորհակալութիւնը հայասէր ազնիւ Տօքտէօնին, արժանի կը համարիմք հրատարակել իւր առ Ս. Պատրիարքն ուղղեալ ինքնագիր նամակն, որ քանի մի խիստ կարեւոր և բանասիրաց մտադրութեան արժանի կէտեր կը պարունակէ :

ԳԵՐԱՊԱՅԾԱՌԻ ԵՒ ՄԵԾԱՅԱՐԳՈՅ ՏԵՐ

Օգերապայծառ եւ մեծապատիւ Տէրութիւնդ աղաչեմ յառաջ քան զամենայն ներել ինձ՝ զի մինչեւ ցայժմ ոչ ետող պատասխանի երկուց նամակացն, որովք Տէրութիւն Զեր զիս պատուեաց և երանելի արար : Մեծապէս շնորհակալու եմ զՍերապայծառութենէ Զերմէ՛ վասն այդոցիկ, յորոց տեսի՛ թէ ոչ ամենեւին մոռացաւ զիս՝ և վասն գրեանցն առաքելոց առ իս, զորքս ՚ի վաղուց հետէ փափաղէի ունել և ընթեռնուլ :

Օերկութարգմանութիւնսն Պատմութեան Սխիսայէլի Ասորւոյ համեմատեցից ՚ի միասին՝ թէ՛ ժամանակ պարտպոյ գտանիցեմ, և կամիմ ճառել զնոցունց յԱրքունի Ղեմարանին (Académie royale) : Սակա հետաքրքրական Երկամեայ Պանդխտութեան ՚ի Հապէշտան՝ զոր յորինեաց Տիմոթէոս վարդապետ, ճառեցից կամ ես ինքնին կամ մի ոմն ՚ի բարեկամաց իմոց յորագործուի : և ՚ի վերոյ ԼԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏ-

ՄՈՒԹԵԱՆ Տ. ՍԵԼԲԻՍԵԿԵԼԻ վարդապետի ուսուցանել կամիմ ՚ի Համալսարանին : Ի բարեւոյ՛ ժամանակաց հետէ ցանկացայ դատաստել ՚ի վերայ այսր առարկայի. բայց վասն զի զայս Պատմութիւն միայն ՚ի կաթողիկ հեղինակացն ծանեայ՝ ոչ կարացի. ևւ յոյժ ուրախանամ զի հուսկ յետոյ այս փափաղն իմ լցեալ է յայտարարի գիտնական առնէ :

Օարմանամ զի ցայսօր ոչ որ ՚ի գիտնականացն Հայոց ակնարկեաց ՚ի նամակս կաթողիկոսին Վրիգորի Տըզայ կաշեցելոյ, որ կայ ՚ի գիրսն „Albert Schultens, Vita et res gestae Sultani Saladini Lugd. Bat. 1732. fol. p. 121-23“ Այս գիրք որպէս կարծեմ գտանի Արքուսագէ՛մ կամ ՚ի գրատանն հիւպատոսութեան Վերմանիոյ կամ ՚ի Պատրիարքարանի Լատինացւոցն կամ եւս ՚ի գրատանն Ինկերութեանն Պաղեստինոյ որ ՚ի հիւպատոսութեանն Լնդոնոյ : Այս նամակ ուղղեալ առ Սուլթանն Սալադին երեւի ինձ հարազատ և յիմում արաբական ձեռագրին եւս պատմութեանն Սալադինու յիշատակի. զի որպէս Բեհա ետ տին (Beha ed din կամ Bohadin) նոյնպէս եւս հեղինակն ձեռագրին իմոյ միշտ առ Սուլթանն կային : Ինձ թուի՛ թէ վասն այսորիկ ոչ գտանի յիշատակեալ ՚ի հեղինակացն Հայոց՝ զի ՚ի տեղիս կաթողիկոս տպեալ կայ کایخوس եւ کایخوس և եւս کایغوس . այլ յիմում ձեռագրին կայ کایخوس :

Վերապայծառութիւնդ փափաղի գիտել քանի՛ են գրատունք հասարակաց ՚ի Բերլին : Կայ աստ Թագաւորական գրատուն՝ ասպա գրատուն առանձին Թագաւորին՝ և հուսկ յետոյ գրատուն վասն Համալսարանին : Եթէ Վերապայծառութիւն Զեր խորհի յղել վասն այսոցիկ մի մի օրինակ տը-

պագրութեանց Սուրբ Աթոռոյդ՝ մեծապէս շնորհակալու եղիցի Կառավարութիւն մեր զՁեռն:

Յուսամ թէ ընկալեալ իցէ Տէրութիւն Ձեր զհինգ աշխարհագրական քարտէզս՝ զոր առաքելի . յորժամ աւարտեալ իցէ տպագրութիւն քարտի զայն Կիպերտի (Kiepert) զայստիկ եւս յղեցից Գերապայծառութեանդ՝ վստն զի այսօրիկ լաւագոյն եղիցին քան զայլս ամենայն:

Ստուգանելով ի խորոց սրտէ զուրջն մեծարանացն եւ սիրոյ Ձերում մեծապայծառ Տէրութեան եւ մեծապատիւ միաբանից Սրբոյ Աթոռոյդ կամ եւ մնամ Ձերում Գերապայծառութեան,

Խոնարհ ծառայ
H. Petermann

Դիւնքին 16 Յուլ, 1872.

ԱՅՔՈՒՆՔՆ

Թէ Սարգսւանէն առ ձեզ զըկուած եւ Փունջի 729 թուոյն մէջ հրատարակուած նամակի պարունակութիւնն եւ թէ՛ ձեր հակիրճ դիտողութիւնն, երկարեանն եւս խիստ արդարօրէն եւ իբարու համապատասխան:

Ի՞նչ ընտիր փորձ մի է այս դէպքը ձեզ համար, որ զգոյշ կենաք ստեպ գահալէժ դատողութենէ: Սիւթ դէպքերը չլիտի՞ Պատասխանեն ձեր բազմափէպ դատողութեանց:

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ

Յունիս 30 ին Սուրբա կուսակալ բաշան Յոպպէ հասաւ. ծովունեղբբր երկու ոչխար մորթեցին ի պատիւ նորագալտեան. եւ Ամոյս 1 ին Ուէմէ հասնելով մինչեւ հետեւեալ օր երեկոյ հոն անցուց. եւ 3 ին յանակնիսարս Երուսաղէմ հասաւ: Այն երեկոյ քաղաքի բնակիչք ճրագավառութեան հանդէս կատարեցին ի պատիւ նորեկ Կուսակալին:

Յուլիս 8 ին Երուսաղէմէն մեկնեցաւ նախկին Կառավարիչ Քեամիլ Փաշան:

Ամոյս 11 ին Պօլիսէն եկած հեռագիրը կիմացնէր Աքքէին եւ Նապոլէսին Երուսաղէմի Կուսակալութենէն բաժնուիլը:

Տեղւոյս Կուսակալն եւս հեռանգրով իր պաշտօնէն հրաժարեցաւ: Սինչեւ ցարդ դեռ պատասխանն եկած չէ:

Ամոյս 6 ին Երուսաղէմացի 18 տարեկան միամօր Յոյն ջորեպան մը Յոպպէի ծովուն եղբբր ձին լուարէն յետոյ. ինք եւս ծով կը մտնէ. բայց դժբաղդութեամբ կրնկղմի եւ անյայտ կըլլայ: Հատ հետախուզութիւն բրած են դիակը գտնելու, բայց ի դուր: Սինչեւ դիակը գտնողին մէկ ոսկի տալ խոտաւցած է Բեթղէհէմի Յունաց առաջնորդ Գեր. Կպիսիոպոսը: Ար նոյն միջոցին Յոպպէ կը գլուխուէր:

Ամոյս 27 ին հինգշաբթի օրը Ամենապատիւ Տ. Տ. Կապեայ Ս. Պատրիարք Զօր անուան տարեգարծի օռնախմբութիւնն ըլլալով՝ փառաւոր հանդիսիւ կատարեց միաբանութիւնս:

Սուրբ Պատարագէն վերջը հանդիսիւ եւ շարական երգելով հանդերձ մաւրանութեամբ, ժողովոյժք եւ քաղաքիս պատուաւոր անձանց հետ բազ